



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





242

4  
1865

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

61  
Ա-23



Handwritten text in red ink at the top of the page.

Faint, illegible text in the upper section of the page.

Faint, illegible text in the upper section of the page.

Faint, illegible text in the upper section of the page.

Faint, illegible text in the upper section of the page.

Faint, illegible text in the upper section of the page.

Faint, illegible text in the upper section of the page.

Faint, illegible text in the upper section of the page.



2010

Faint, illegible text in the lower section of the page.

Faint, illegible text in the lower section of the page.

Faint, illegible text in the lower section of the page.



57

Printed in Turkey

61

4 - 23

5

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

ԱՌ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԵՆԻ Յ. ՔԻՒՐՔՅԵԱՆ

ՖԻՆՃԱՆՃԸԼԱՐ ԵՕԳՈՒՇԸ Թ. 19

- 1865 -



15990

Ա. Զ. Դ



Տեղեկագիրս թէեւ Հոգարարձութեանս  
պաշտօնը լրանալէն քիչ ետքը պատրաստուած  
էր, բայց համաճարակ հիւանդութիւնը ցարդ  
յապաղեցուց անոր հրատարակութիւնը :



6443

39.





# ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒՍՆԴԱՆՈՑԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

2002



Սահմանադրութեան Բ. տարեգլուխը հա՛ստատեալ ըլլալով, հոգաբարձութիւնս ամբողջապէս նորոգուելէ առաջ կը փութայ սահմանադրապէս իր ունեցած համարատուութեան պարտքը կատարել առ Պատկառելի Ժողովո՛ւ։

Ազգային Հիւանդանոցի հոգաբարձութիւնս 1864 Յունուարի սկիզբը հազիւ կրցաւ իւր ամբողջութիւնը գտնել եւ օրինաւոր նիստ կազմել, որով իւր պաշտօնը 16 ամիս տեւեց. եւ թէպէտեւ չորս ամիս ետքը, այն է՝ 1864 Մայիսի սկիզբը, Սահմանադրութեան 44 յօդուածին համեմատ նորոգուիլը հարկ կըլլար, բայց Քաղաքական Ժողովո՛ւ ինչպէս միւս խորհուրդներն ու հոգաբարձութիւնները, նոյնպէս եւ Հիւանդանոցի հոգաբարձութիւնս ազատ թողլով այս փոփոխութենէն, հարկադրեցաւ իւր պաշտօնը 16 ամիս շարունակել։

Ինչպէս որ ՚ի պաշտօնէ վերահասու է ժողովո՛ւ, հոգաբարձութիւնս իւր այս կրկին շըրջանին մէջ մեծամեծ դժուարութիւն ու ան-



տանելի նեղութիւն կրեց դրամական մասին ,  
եւ որոնք գլխաւորապէս պատճառ եղան որ  
7-8 ամիսէ ետեւ , 1864 Օգոստոսի մէջ , Հոգա-  
բարձութեանս անդամներէն մէկ քանիներն  
իրենց պաշտօնէն հրաժարեցան եւ Քաղաքա-  
կան ժողովդ ալ անոնց տեղ նոր ընտրութեանց  
ձեռնարկելու պարտաւորեցաւ :

Սյս միջոցին էր որ Հոգաբարձութիւնս իւր  
ամբողջութիւնը կորսնցունելով , մէկ քանի ա-  
միսի չափ միայն իւր դանձապետը Հոգաբար-  
ձութեան մնացեալ անդամոց համահաճու-  
թեամբը ազգային այն յարկին մէջ պատասպա-  
րելոց թշուառ վիճակին կարեկցելով՝ շարու-  
նակեց Հիւանդանոցի պէտք եղած հոգն ու  
խնամքը տանիլ :

1864 Հոկտեմբեր 18ին Հոգաբարձութիւնս  
իւր ամբողջութիւնը վերստին դտնելով սկսաւ  
օրինաւոր նիստ ունենալ , սակայն այս վերընտ-  
րութիւնն ըլլալէ անմիջապէս ետեւ միեւնոյն  
նախկին դժուարութիւններն աւելի սաստ-  
կութեամբ Հոգաբարձութեանս դիմացն ելան ,  
եւ այս ալ անյուսալի չէր , ըստ որում՝ ոչ թէ  
անդամոց փոփոխութեամբը՝ այլ դրամական  
միջոցներով միայն կրնային բառնալ այս դժ-  
ուարութիւնները :

Քանի քանի անգամ Հոգաբարձութիւնս  
Պատկառելի ժողովոյդ դիմեց եւ Հիւանդա-  
նոցի դժուար վիճակին անմիջական ու հաս-  
տատուն դարմաններ պահանջեց . բայց՝ եթէ



ներելի է ըսել՝ իբր միակ դարման ընդհանուր  
անտարբերութիւն մը զինքը շրջապատած էր ,  
մինչեւ անգամ անընդհատ փորձով տեսաւ  
որ Հիւանդանոցի մատակարարութեան հա-  
մար պէտք եղած նպաստը կեդրոնական սըն-  
տուկէն հայթայթելու մասին աննուղղակի  
դժկամակութիւն մը կար, որ՝ հակառակ Պատ-  
կառելի Ժողովոյդ պաշտօնական հրամաննե-  
րուն՝ հակառակ Հիւանդանոցի ստիպողական  
կարօտութեանցը՝ անդադար իւր դերը կը  
ներկայացնէր :

Այս կարեւոր՝ բայց միանգամայն ցաւալի՝  
կէտը բացատրել աւելորդ չեմք համարեր :

Գիտէ Պատկառելի Ժողովդ թէ 'ի վաղուց  
'ի վեր սովորութիւն եղած է որ Հիւանդանոցի  
Ժախուցը նպաստ մ'ըլլալու համար Ճեմարան ա-  
նունով որոշեալ նուէր մը կառնուի ազգային  
ճամբորդներէ եւ կալուածական առուծախ  
ընողներէ , ինչպէս նաեւ , Հայագին անունով  
նուէր մըն ալ նշանտուութեան ժամանակ եր-  
կու կողմանէ : Այս երկու հասոյթներն ալ 'ի  
վաղուց 'ի վեր Հիւանդանոցի սնտուկը կը  
մտնէին եւ ըստ մեծի մասին անոնցմով կը հո-  
գացուէր Հիւանդանոցի պիտոյքը : Նախորդ  
Սահմանադրութեան օրով անգամ այնպէս ե-  
ղած է . բայց արդի Սահմանադրութեան օ-  
րով Տնտեսական խորհուրդն որոշեց որ յիշ-  
եալ հասոյթներն ելեւմտից հոգաբարձու-  
թեան ձեռօք կեդրոնական սնտուկին մէջ



մանեն, եւ ապա, իբր նպատակ Հիւանդանոցի,  
5000 դրոշ տրուի կեդրոնական անտուկին Հիւ-  
ւանդանոցի անտուկին: Տնտեսական խոր-  
հուրդն ասով կարծեց թէ Սահմանադրու-  
թեան 49 եւ 51 յօդուածներուն տրամադրու-  
թիւնն 'ի գործ դրաւ, բայց իւր սխալմունքը  
հոն եղաւ որ Հիւանդանոցի անուանը առ-  
նուած նուէրները Դիւանական հասոյթ կար-  
ծելով, զանոնք կեդրոնական անտուկին յատ-  
կացուց. եւ իւր սխալած ըլլալն ալ խիստ  
պարզ է, որովհետեւ թէեւ նշանատուութեան  
ժամանակ, իբր Դիւանական հասոյթ, Խաչագին  
անունով որոշեալ տուրք մը կառնուի, որ  
հարկաւ կեդրոնական անտուկին կը վերաբերի,  
բայց՝ իբր Հիւանդանոցի հասոյթ ալ Հաչագին  
անունով որոշեալ տուրք մը կառնուի, որ այն  
ալ հարկաւ Հիւանդանոցի անտուկին կը վե-  
րաբերի: Սակայն Հոգաբարձութիւնս իրեն  
նպատակ ունենալով աւելի իւր պաշտօնին  
մէջ օգտակար ըլլալ քան թէ ինքնակամու-  
թիւն մը վարել, Տնտեսական խորհրդոյն այս  
որոշմանը չհակառակեցաւ այն ատեն, յու-  
սալով որ շաբթէ շաբաթ անյապաղ պիտի  
ընդունի որոշեալ 5000 դրուոշ նպաստը:

Արդ՝ Տնտեսական խորհուրդն իր պաշտօնը  
անընդհատ վեց ամիս շարունակած ատեն, իր  
որոշումն ու պայմանն ալ ամենայն ճշդութեամբ  
կատարեց, որոյ համար մեր խորին շնորհա-  
կալութիւնը հրապարակաւ յայտնելու պարտքը



անհրաժեշտ կը համարեմք : Սակայն՝ երբ Ելեւմտից Հոգաբարձութեան ընտրութիւնն եղաւ, Տնտեսական խորհրդոյն խոստումն ու պայմանը աւրուեցաւ, շաբաթական որոշեալ նպաստը ոչ միայն անկանոն կերպիւ, այլ եւ ոչ իսկ կիսով չափ տրուիլ սկսաւ : Վասնորոյ Հոգաբարձութիւնս քանի՛ քանի՛ անգամ բողոքելէ ու ապարդիւն ելնելէ ետեւ, պարտաւորեցաւ իր պաշտօնին, այն է՝ Հիւանդանոցի իրաւունքը պահանջել. ըսել կ'ուզեմք Հիւանդանոցի սնտուկին վերաբերեալ հասոյթները, զորս Ելեւմտից Հոգաբարձութիւնն իր ձեռօք հաւաքելով, անոնց փոխարէն շաբաթը 5000 ղուրուշ տալու հարկը վրան առած ու գործադրած չէր, Հոգաբարձութիւնս ուղղակի իր ձեռօք հաւաքել պահանջեց. եւ այս ալ կարծեմք օրինաւոր էր ու Սահմանադրութեան բոլորովին համաձայն. որովհետեւ Սահմանադրութիւնը կ'ըսէ, « կեդրոնական սնտուկին մուտքն են՝ Ազգ. ընդհանուր տուրք, կոստանդնուպօլսոյ Պատրիարքական Դիւանատան հասոյթք, եւ արանց ճանապարհի տեղի որոշեալ Ազգին անասանք եղած կրակ կամ ՆՈՒԷՐ » . ըսել է թէ, այն ամեն կտակ կամ նուէր որ Ազգին անուանը չեն, եւ կամ մասնաւոր տեղի անուանն են, բնաւ կեդրոնական սնտուկին հասոյթ չեն. հետեւաբար Հիւանդանոցի անուանը եղած, մասնաւոր Հացագին անունով նուէրները, բնաւ կեդրոնական սնտուկին հասոյթ չեն, այլ Հի-



ւանդանոցի սնտուկին սեպհական մուտքն են,  
զորս Հիւանդանոցի Հոգաբարձութեան ձեռօք  
ուղղակի հաւաքել հարկ էր եւ է, Սահմա-  
նադրութեան 31<sup>րդ</sup> յօդուածին ամենապարզ  
տրամադրութեան համեմատ: Սակայն մեր այս  
արդարացի ու սահմանադրական պահանջումը  
դժբաղդաբար ընդունելութիւն չը գտնելով  
Պատկառելի Ժողովոյդ կողմանէ, որոշուեցաւ  
որ կեդրոնական սնտուկին հասութից կէսը  
անխախտ կերպիւ Հիւանդանոցի սնտուկին  
յանձնուի. բայց Ժողովոյդ այս վերջին որո-  
շումն ալ անգործադրութեան դատապար-  
տուելով, որոշումն եղած օրէն, այսինքն՝ Յուն-  
ուարէն մինչեւ Մայիսի սկիզբը 5000 ղուրուշ  
միայն վճարուեցաւ Հոգաբարձութեանս, փո-  
խանակ 70—80 հազար ղուրուշի:

Ասոնք ըստ մեզ անմեկնելի դժկամակու-  
թեան դառն արդիւնք ու անընդհատ փորձեր  
էին, որոց առջեւ եթէ Հոգաբարձութիւնս  
վհատէր ու իր խնամոցը յանձնուած խղճալի-  
ներն անօթի չձգելու համար, իր ջանքը չը  
բազմապատկէր, կրնայ մակաբերել Պատկա-  
ռելի Ժողովդ թէ ի՞նչ պիտի ըլլար Հիւանդա-  
նոցի վիճակը:

Չը մոռնանք ըսելու թէ Գաղ. Ժողովդ Յուն-  
ուար 15ի նստին մէջ, ՚ի ներկայութեան ընդ-  
հանուր Ժողովոյ դիւանին, Տնտեսական խոր-  
հրդոյ, Ելեւմտից եւ Հիւանդանոցի Հոգա-  
բարձութեանց, որոշեց որ 100,000 ղուրուշի



կամաւոր նուէր հաւաքուի Ազգէն 3 զուրուշ  
նոց 20,000 տոմսակ ցրուելով: Հոգաբարձու-  
թիւնս թէեւ անմիջապէս դործադրեց ֆա-  
ղաքական ժողովոյդ այս որոշումը եւ թաղա-  
կան խորհրդոց ու նշանաւոր անձանց ցրուելով  
մեծ ջանք 'ի դործ դրաւ զանոնք ծախելու,  
բայց ցաւօք կ'ըսեմք որ հազիւ 5321 տոմսակի  
գին 26,605 զուրուշ կարելի եղաւ ձեռք ան-  
ցրնել, եւ մնացեալ տոմսակները թաղական  
խորհրդոց ոմանց քով ցարդ կեցած են, որք  
ո՛չ ծախածներնուն ստակները կը հատուցանեն  
եւ ո՛չ ալ մնացեալները յետս կը դարձնեն:

Ահա այս դժուարութիւնները միայն պատ-  
ճառ եղան որ Հոգաբարձութիւնս գրեթէ  
վհատելով վերջին օրերս, չը կրցաւ կանոնա-  
ւոր նիստեր ընել ու ներքին բարեկարգու-  
թեանց կատարելապէս զբաղիլ, եւ Հիւան-  
դանոցի յատուկ կանոնադրութիւնը՝ որ խիստ  
անհրաժեշտ է՝ խմբագրել. այսու ամենայնիւ  
իրաց այս վիճակին մէջ Հոգաբարձութիւնս  
մինչեւ իր պայմանաժամը, 1865 Մայիս 1, իր  
պաշտօնը խղճիւ եւ դիտակցութեամբ կրցա-  
ծին չափ վարեց, 56,337 զրշ. 35 փրյ. միայն  
պարտք թողլով: Աւելորդ չէ ըսելը որ եթէ  
շաբաթական որոշեալ 5,000 զշ. նպաստը կեդ-  
րոնական սնտուկին կողմանէ շարունակ վճար-  
ուելու ըլլար, ինչպէս կը վճարուէր Տնտեսա-  
կան խորհրդոց օրով, այն ատեն Հիւանդանոցն  
այսօր բնաւ պարտք չը թողելէ 'ի զատ, աւելի



արժանաւորապէս ու առատօրէն կը մատակարարուէր, միանգամայն 60000 զրշի գումար մ'ալ աւելցուցած կ'ըլլար, որ միշտ իբր պահեստի դրամագլուխ գործածուելով, կրնար մեծ ծառայութիւն ընել Հիւանդանոցի մատակարարութեան. ըստ որում անով ամեն պարէն, միայտ ու անուխ, ժամանակին աժան գնով կրնար գնուիլ:

Սակայն հոգաբարձութեանս խիղճը հանդարտ է. ինք իր կրցածն ըրաւ. առանց Հիւանդանոցի պատասպարեալները անդարար կերակուրէ զրկելու, առանց զանոնք մերկ պահելու, առանց զանոնք աղտեղութեան մէջ թողելու, խնայողութեան օրինաւոր միջոցներ գործածելով, 450ի չափ որք՝ անկար՝ հիւանդ՝ խելագար եւայլն, անձինք պատրաստարող հաստատութիւնը չափաւոր վիճակի մէջ կրցաւ տնտեսել ու մատակարարել, առանց արտաքոյ կարգի թերութեան մը տեղի տալու: Օրինաւոր տնտեսութիւն ու կանոնաւոր մատակարարութիւն, ահա՛ ասոնք եղան ամեն նեղութեանցն ու դժուարութեանցը մէջ հոգաբարձութեանս ուղեցոյցերը:

Ահաւասիկ 16 ամսոց մէջ Հիւանդանոցի ելեւմտից հաշուեցոյց պատկերը, որ միանգամայն առաջին շրջանին, այսինքն՝ քառամսեայ, եւ երկրորդ շրջանին, այսինքն՝ տարեկան ելեւմուտքը առանձին առանձին կը յայտնէ:



# ՀԱՇՈՒԵՑՈՅՑ ԵԼԵՒՄՏԻՑ

## Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Հ Ի Ի Ա Ն Դ Ա Ն Ո Ց Ի

1864 ՅՈՒՆՎԱՐ 1 — 1865 ԱՊՐԻԼ 30

Մ Ո Ւ Ց Ք

Ե Լ Ք

	1864 Յունվար 1 -Ապրիլ 30.		1864 Մայիս 1 -1865 Ապրիլ 30		1864 Յունվար 1 -1865 Ապրիլ 30			1864 Յունվար 1 -Ապրիլ 30.		1864 Մայիս 1 -1865 Ապրիլ 30		1864 Յունվար 1 -1865 Ապրիլ 30	
	Դ.Ը.	Փ.Ր.	Դ.Ը.	Փ.Ր.	Դ.Ը.	Փ.Ր.		Դ.Ը.	Փ.Ր.	Դ.Ը.	Փ.Ր.	Դ.Ը.	Փ.Ր.
Կեդրոնական սնտուկէն հապատ . . . . .	73248		136249	40	209666	40	Հաց . . . . .	25849	5	80493	5	106042	40
Կալուածներէ, պատասպարեալներէ հասոյթ . . . . .	14336		77143	30	91449	30	Տէրութեան շնորհած հացին գինը . . . . .	5625		16875		22500	
Տէրութեան շնորհած հացին գինը . . . . .	5625		16875		22500		Միս . . . . .	2425		9966	30	12094	30
Տէրութեան շնորհած մսին գինը . . . . .	5400		16200		21600		Տէրութեան շնորհած մսին գինը . . . . .	5400		16200		21600	
Տատեան գերդաստանէն մնացած մսի գինը . . . . .			10950		10950		Ձէթ . . . . .	2342	30	11886		14228	30
Կտակներէ հասոյթ . . . . .	40		2254		2294		Պանիր . . . . .	2480		850		3030	
Դռան տուրք . . . . .	1234	20	3220		4454	20	Սոխ . . . . .	756				756	
Ննջեցեալներէ մնացած ստակ . . . . .	503	25	4895	45	5399		Կարագ (սայեաղի) . . . . .	3475	30	5285		8760	30
Փանձանակի հասոյթ . . . . .	1689	20	8645		10334	20	Շաքար . . . . .	1292		884	20	2176	20
Դրամական նուէրք . . . . .	1095	20	64022		62417	20	Սուրճ . . . . .	1277		1927	40	3204	40
Չանազան նուէրներու արժէք՝ ուսու-							Ալիւր, Բրինձ եւ Դդմած . . . . .	2294		7634	30	9928	30
տի, հանդերձի եւայլն . . . . .	6000		24000		30000		Ընդեղէն եւ Ձիթապտուղ . . . . .	1724	25	3534	40	5255	35
Չանազան հասոյթ . . . . .	574		2404	20	2675	20	Կանաչեղէն . . . . .	1772		10796	45	12568	45
Տոմսակներու գին . . . . .			26605		26605		Օճառ . . . . .	2345	40	6489	30	8535	
Խնամակալ Տիկնանց ձեռք հանդերձի գին . . . . .	30500				30500		Մոմ . . . . .	1468	20	2442	30	3644	40
	140243	5	390097	35	530344		Չանազան ծախք . . . . .	4791	20	15964		20755	20
					56337	35	Նորոգութիւնք . . . . .	7444	30	8378	30	15523	20
ԲԱՅՁ՝ ԶԱՆԱԶԱՆ ՊԱՐՏՔ . . . . .							Դեղորայք . . . . .	2493		6646	35	9409	35
							Ծխախոտ . . . . .	3998	40	10434	30	14430	
							Յարդ, Գարի, Թէփ . . . . .	2547	40	4835	35	7383	5
							Աղ, Պղպեղ . . . . .	473		1078	40	1254	40
							Պտուղ . . . . .	354		664	40	1048	40
							Չինեղէն . . . . .	247		644	40	858	40
							Կաթ, Հաւկիթ . . . . .	585		320	30	905	30
							Փայտ . . . . .	2099		7629	20	9728	20
							Ածուխ . . . . .			8016		8016	
							Կարասիք . . . . .	16364	30	15979	5	32343	35
							Հանդերձեղէն . . . . .	1052	20	60420	20	64173	
							Ամսականք . . . . .	20632		80547	20	104149	20
							Կտակ . . . . .			8016		8016	
							Չանազան նուէրներու արժէք . . . . .	6000		24000		30000	
							Խնամակալ Տիկնանց ձեռք հանդերձի ծախք . . . . .	30500				30500	
								158846		427832	35	586678	35



20504-8088 FLEWISH

U S P R E J - 2 P R E J U D I C I A L

1861 APR 24 1-1862 APR 1 30

114

Case No.	Plaintiff	Defendant	Amount	Date
1000	...	...	...	...
1001	...	...	...	...
1002	...	...	...	...
1003	...	...	...	...
1004	...	...	...	...
1005	...	...	...	...
1006	...	...	...	...
1007	...	...	...	...
1008	...	...	...	...
1009	...	...	...	...
1010	...	...	...	...
1011	...	...	...	...
1012	...	...	...	...
1013	...	...	...	...
1014	...	...	...	...
1015	...	...	...	...
1016	...	...	...	...
1017	...	...	...	...
1018	...	...	...	...
1019	...	...	...	...
1020	...	...	...	...
1021	...	...	...	...
1022	...	...	...	...
1023	...	...	...	...
1024	...	...	...	...
1025	...	...	...	...
1026	...	...	...	...
1027	...	...	...	...
1028	...	...	...	...
1029	...	...	...	...
1030	...	...	...	...
1031	...	...	...	...
1032	...	...	...	...
1033	...	...	...	...
1034	...	...	...	...
1035	...	...	...	...
1036	...	...	...	...
1037	...	...	...	...
1038	...	...	...	...
1039	...	...	...	...
1040	...	...	...	...
1041	...	...	...	...
1042	...	...	...	...
1043	...	...	...	...
1044	...	...	...	...
1045	...	...	...	...
1046	...	...	...	...
1047	...	...	...	...
1048	...	...	...	...
1049	...	...	...	...
1050	...	...	...	...
1051	...	...	...	...
1052	...	...	...	...
1053	...	...	...	...
1054	...	...	...	...
1055	...	...	...	...
1056	...	...	...	...
1057	...	...	...	...
1058	...	...	...	...
1059	...	...	...	...
1060	...	...	...	...
1061	...	...	...	...
1062	...	...	...	...
1063	...	...	...	...
1064	...	...	...	...
1065	...	...	...	...
1066	...	...	...	...
1067	...	...	...	...
1068	...	...	...	...
1069	...	...	...	...
1070	...	...	...	...
1071	...	...	...	...
1072	...	...	...	...
1073	...	...	...	...
1074	...	...	...	...
1075	...	...	...	...
1076	...	...	...	...
1077	...	...	...	...
1078	...	...	...	...
1079	...	...	...	...
1080	...	...	...	...
1081	...	...	...	...
1082	...	...	...	...
1083	...	...	...	...
1084	...	...	...	...
1085	...	...	...	...
1086	...	...	...	...
1087	...	...	...	...
1088	...	...	...	...
1089	...	...	...	...
1090	...	...	...	...
1091	...	...	...	...
1092	...	...	...	...
1093	...	...	...	...
1094	...	...	...	...
1095	...	...	...	...
1096	...	...	...	...
1097	...	...	...	...
1098	...	...	...	...
1099	...	...	...	...
1100	...	...	...	...



Տարեկան ծախուց գումարը 427832 դրշ. 35  
 փոյ, եւ միջին հաշուով Հիւանդանոցի մէջ  
 պատասպարելոց թիւը գրեթէ 450 ըլլալով,  
 ամեն մէկ անձի համար տարին 950 դրշ 30  
 փարայ ծախք եղած ըլլալը կը տեսնուի: Բայց  
 որովհետեւ Հիւանդանոցի վիճակը բարւո-  
 չքութեան կարօտ է, եւ պատասպարելոց կե-  
 ղակրեղէններն աւելի սննդարար ընելն ան-  
 հրաժեշտ է, ինչպէս որ պիտի տեսնուի սը-  
 նունդի վրայ խօսած ատեննիս, վասնորոյ  
 մարդ գլուխ տարեկան ծախքն ալ աւելնալը  
 բնականաբար անհրաժեշտ է:

### ԲՆԱԿԱՐԱՆ

Ամեն տարի Հիւանդանոցի շէնքին նորո-  
 գութեան համար մեծ գումարներ ծախք  
 կըլլար, եւ դարձեալ միեւնոյն հին ու տձեւ  
 շէնքն էր: Հոգաբարձութիւնս առջի ամիս-  
 ներուն մէջ մէկ քանի մը ստիպողական նորո-  
 գութեանց համար 15523½ դրշ վատնեց, ինչ-  
 պէս որ հաշուեցոյցին մէջ կը տեսնուի. բայց  
 այսքանը բաւական չեղաւ եւ հիմնական նո-  
 րոգութեան մը հարկը օր օրի զգալի եղաւ:

Հիւանդանոցի այս անհրաժեշտ պէտքը  
 ճատեսական խորհրդոյ Ատենապետ Մեծ. Նո-  
 ղիկեան Նշան էֆէնտին զգալով, Հոգաբարձու-  
 թեանս առաջարկութեանը վրայ՝ Ազգ. վար-  
 չութեան գիտութեամբն ու հաւանութեամբ



բը՝ ազգասիրաբար յանձնառու եղաւ այս նորոգութեան հոգն իր վրայ առնուլ ու գլուխ հանել, ազգասէր ու առատաձեռն անձանց կամաւոր նուէրներուն ապաւինելով:

Ուրախութեամբ կ'ըսենք թէ Մեծ. Նորիկեան Նշան էֆէնտին յաջողեցաւ այս ծանր ու դժուարին գործը գլուխ հանել, եւ Ս.զգին ձեռքը յանձնել գրեթէ նոր կառուցուած հաստատուն շէնք մը. ըստ որում այսօր Հիւանդանոցը բոլորովին կերպարանափոխ եղած է, ներսով ու դրսով նորոգուած ու ներկուած, պատուհաններն ամբողջապէս նորէն շինուած, շէնքին բաժանումներն ու սանդուխներն աւելի կանոնաւորուած, բակերն ու պարտէզները երկրթէ վանդակներով շրջապատեալ՝ մաքուր ու զարդարուն. մէկ խօսքով տխուր ու քայքայուած շէնքի մը տեղ, ուր ամեն կողմէ հոմս ու արեւը ներս կը թափանձէր, ձիւնն ու անձրեւը ներս կը տեղար, հաստատուն, վայելուչ եւ զուարթատեսիլ շէնք մը յաջորդած է, աւելի համաձայն ողջպահիկ կանոնաց:

Ուստի Հոգաբարձութիւնս անհրաժեշտ պարտք կը համարէ հրապարակաւ յայտնել իր խորին շնորհակալութիւնը, ինչպէս Մեծապատիւ Նորիկեան Նշան էֆէնտին, որ գլուխ կանգնեցաւ այս մեծ ու դժուարին գործին ու յաջողութեամբ գլուխ տարաւ, նոյնպէս եւ այն ամեն ազգասէր անձանց, որոց ձեռնառուութեամբն այս բարեգործութիւնը գլուխ ելաւ:



ՄԱՔՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԳԵՍՏ

Հիւանդանոցի շէնքին նորոգուիլը մեծ դիւրութիւն տուաւ Հոգաբարձութեանս մաքրութեան համար անհրաժեշտ եղած կանոններն ու սովորութիւնները գործադրելու, որով Հիւանդանոցն ազատ եղաւ աղտեղութենէ ու այլ եւ այլ դարչահոտութենէ: Այն հին կարասիքը՝ որ մեծաւ մասամբ աղտոտած ու փտտած էին, շնորհիւ Ազնուափայլ խնամակալ Տիկնանց եւ բարեգործ անձանց հիմնովին նորոգուեցան, ու պարզ եւ վայելուչ նոր կարասեօք Հիւանդանոցի ամեն կողմը զարդարուեցաւ. կերակուրի սեղանները մաքրութեան համար փայլուն մոմլաթով (մուշամպայով) փակուեցան, խոհարանի անօթները փոխուեցան ու նորոգուեցան, անկողինները վերմակները՝ բարձերն ու սաւանները նորէն շինուեցան, ինչպէս նաեւ հանդերձեղէնք ու ճերմակեղէնք, այնպէս որ այսօր իւրաքանչիւր պատասպարեալ շաբաթն անգամ մը ճերմակեղէն կը փոխէ, իսկ հիւանդաց ճերմակեղէններն ու անկողնոց պէտքերն՝ ամեն անգամ որ հարկը պահանջէ՝ անպատճառ կրնան փոխուիլ:

Ահաւասիկ 16 ամսոց մէջ շինուած հանդերձներուն ու ճերմակեղէններուն ցուցակը:



- 200 Մաւան :
- 800 Շապիկ :
- 800 Շապկընկեր :
- 100 Բարձի երես :
- 182 Անթէրի (շէյթան պէղի եւ պասմա) :
- 100 Տիզլիք :
- 40 Պլուզ (մօսքօֆ պէղի) :
- 40 Տիզլիք " "
- 150 Խըրդա :
- 161 Չաքէթօ (դասթօւ)
- 161 Բաճկոն :
- 161 Փանթալօն :
- 32 Շրջազգեստ :
- 360 Զոյդ ապա թէրլիք :
- 343 " Կոշիկ երկու սեռի :
- 246 " Բուրդ եւ թիրէ դուլպայ :
- 244 Գլխարկ :
- 40 Ճերմակ ուսկուֆեսա :
- 1 Ճիւպպէ :
- 120 Պլուզ (տօք) :
- 120 Փանթալօն (տօք) :

Աւելորդ չեմք համարեր կրկնել թէ վերոյ  
 յիշեալ ցուցակին մէջ պարունակեալ հանդեր  
 ձեղէններուն ամենամեծ մասը Ազնուափայլ  
 Խնամակալ Տիկնանց առատաձեռն շնորհաց  
 արդիւնքն են, որոց համար մեր անկեղծ շը  
 նորհակալութիւնն ու խորին յարգանքները հը  
 րապարակաւ իրենց մատուցանելու պարտա



կան կը ճանաչեմք զմեզ . եւ միանգամայն կը  
խոստովանիմք որ եթէ Նորա իրենց ձեռնոր  
ւութեամբը մեզի օգնական ըլլալով զմեզ չը  
քաջալերէին , մեզ համար բոլորովին դժուար  
եւ գուցէ անհնար պիտի ըլլար այս դժուար  
րին պաշտօնը շարունակել :

### ՄՆՈՒՆԴ

Յառաջուց սովորաբար օրն անգամ մը՝ եւ  
րեկոյները միայն՝ տեսակ մը կերակուր կը տրը  
ուի եղեր Հիւանդանոցի պատասպարելոց , իսկ  
ցերեկները պանիր կամ ձիթապտուղ միայն :  
Արդ՝ բժշկական գիտութիւնը փորձով հաս  
տատած ըլլալով թէ ամեն մէկ անհատի օրը որ  
չափ եւ ի՞նչ տեսակ սնունդ տալ պէտք է ,  
եւ թէ այն չափը զեղջելը կամաց կամաց սովա  
մահ ընել է , ուստի Հոգաբարձութեանս ա  
ռաջին գործն եղաւ Հիւանդանոցի առ հասա  
րակ բոլոր պատասպարելոց ցերեկներն ալ տե  
սակ մը կերակուր տալ , եւ կարելի եղածին  
չափ կերակրոց տեսակները փոխելով աւելի  
սննդարար տեսակներ ընտրել , առանց խնա  
յողութեան պայմաններէն շեղելու : Այսու ա  
մենայնիւ Հոգաբարձութիւնս կ'զգայ թէ Հի  
ւանդանոցի սննդական վիճակը աւելի եւս  
բարւոքութեան կարօտ է , այս անուրանալի  
է . կ'զգայ , օրինակի աղաղաւ , թէ կերակուրի  
հետ՝ գէթ ծերերուն՝ սուղ ինչ գինի տալն



օգտակար է . կերակրոց տեսակը՝ գէթ երեկոյները՝ երկուքի հանելը , պտղեղէն մ'աւելցընելն ու առաւօտները նախաճաշի համար ճերմակ հաց եւ սուրճ կամ կաթ տալ կարելո՞ր է . բայց այս բարւոքութիւնները բնականաբար կ'աւելցընեն Հիւանդանոցի ծախուցքանակութիւնը , որ ըստ ինքեան առանց ասոնց ալ Սզգին համար ծանր ու դժուարին եղած է հոգալ . եւ այսչափն ալ , կրնանք առանց ինքնապարծութեան ըսել թէ , Հոգաբարձութեանս առանձին ջանիւքը կարելի եղած է գործադրել :

Կարելո՞ր կը համարիմք յիշել նաեւ թէ Հիւանդանոցի համար զատ խոհարար կայ , որ բժշկին հրահանդացն համեմատ զատ տեսակ կերակուրներ կ'եփէ : Հիւանդաց ճերմակ հաց կը տրուի , իսկ առողջ պատուարեւոց թխադոյն :

### ՀԻՒՍՆԴԱՐՄԱՆ

Հիւանդարանը՝ ազգային այս Հաստատութեան այն մասն է , ուր հիւանդներն ու վատառողջները կը խնամուին : Հիւանդարանն ունի այցելու բժիշկ մը , որ շաբաթն երեք անգամ գալով իր պաշտօնը կը կատարէ . վերջին ատեններս ներքին երկրորդական բժիշկ մ'ալ հաստատուեցաւ , որ գիշերները Հիւանդանոցի մէջ բնակելով , այցելու բժշկին պատուէրները կը գործադրէ եւ ստիպողական պա-



րագայներու մէջ հիւանդաց պէտք եղածը կը տնօրինէ :

Այցելու բժշկի պաշտօնը մինչեւ մէկ տարի ձրի կատարել համազգի շորս բժիշկներ ազգասիրաբար յանձն առին , յաջորդաբար երեքական ամիս շարունակ պաշտօն վարելով վերոյիշեալ բժիշկներն են , Տօքթօր Մողեան , որ արդէն սկսած է իր պաշտօնը վարել եւ իր շրջանն ալ լրացընելու մօտեցած է , Տօքթօր Ռաֆայէլեան , որ Բ. շրջանը պիտի լրացընէ , Տօքթօր Խորասանճեան և Տօքթօր Նուրիճեան , որ Գ. և Դ. շրջանները պիտի լրացնեն .

643  
39

Ազգային պաշտօնները ձրի կատարուելու սկզբունքին ջատագով չենք , ընդհակառակը համոզուած եմք որ ամեն պաշտօն իր արժանաւոր վարձատրութիւնը պէտք է ունենայ . ըստ որում առանց նիւթական վարձատրութեան լոկ բարոյական պատասխանատուութեամբ դործ տեսնելու առաքինութիւնը ընդհանուրի տրուած չէ եւ չը կրնար ըլլալ . բայց Հիւանդանոցի բժշկի տաժանելի պաշտօնին ձրի կատարուելը , Ազգին այժմեան դրամական ամենանեղ վիճակին հետեւութիւնն եղած է եւ անհրաժեշտ հարկ մ'էր , որուն՝ ինչպէս որ ըսինք՝ մենք ալ ջատագով չենք բնաւ , հետեւաբար լրագրաց ոմանց այս մասին ըրած քննադատութիւնն ալ թէեւ խիստ արդարացի էր , բայց՝ « հարկին օրէնքը լուծանելու » սկըզբան անհմտութե արդիւնք պէտք է համարուիլ :





Հիւանդաց պէտք եղած դեղորայք եւ այլ հարկաւոր խնամք անպակաս եղած են Հոգաբարձութեանս օրով, զանոնք մաքուր պահելու համար պէտք եղածին չափ ճերմակեղէն, զանոնք դարմանելու համար ներքին վիրաբոյժ եւ դեղագործ, զանոնք խնամելու համար դիւանդաց պահապան մը եւ օգնական պահապաններ յատկացեալ են, հիւանդ տղայոց եւ կանանց համար, նոյնպէս եւ ծանր հիւանդաց համար զատ զատ սենեակներ որոշուած են, իրենց անմաքրութեամբն ուրիշ հիւանդաց նեղութիւն կամ վնաս պատճառողներն ալ ուրիշ ընդարձակ սենեկի մէջ դրուած են: Ճաշտ (քէլ) տղայոց համար յատուկ խնամք կը տարուի, այս ախտը Հիւանդանոցի մէջ խիստ ճարակուած էր, բայց օր օրի անհետանալու վրայ է, պէտք եղած հոգն ու խնամքը տարուելով:

Սյա ամենը կը ցուցնէ թէ Հիւանդարանի մասը Հոգաբարձութեանս խորին ուշադրութիւնն ու բոլոր հոգը գրաւած է:

Հիւանդանոց մտնել ուզող հիւանդները բաւական էր որ իրենց թաղին խորհրդոյն վկայութիւնը ձեռքերնին Տեսչին ներկայանային, որ անմիջապէս կ'ընդունէր ներքին բժշկին վկայութիւնը: Իսկ յիմարները, անտէրունչ կամ անդգաստ տղայք եւ այլ պատասպարելիք Հիւանդանոցի մէջ ընդունուելու համար հարկ էր որ Հոգաբարձութեան դիմէին, ոպ զի անոնց հանգամանքը քննուէր եւ ըստ այնմ հրամանագիր տրուէր Հիւանդանոցի մէջ պատասպարուելու:



ՅԻՄԱՐԱՆՈՅ

Այս ալ՝ Հիւանդանոցի հաստատութեան այն մասն է՝ ուր խելագարները կը պատսպարուին միայն, առանց դարմանուելու: Թէ եւ յիմարանոցի մը մէջ խելագարներ պատսպարելու նպատակը միայն զանոնք բանտարկել պէտք չէ ըլլալ հարկաւ, այլ միանգամայն դարմանել զանոնք. բայց մեր ազգային Յիմարանոցը՝ ի վաղուց անտի առաջին պայմանը դործադրած՝ իսկ երկրորդէն խոյս տուած է: Հոգաբարձութիւնս կը փափաքէր երկրորդ պայմանն ալ դործադրել. կ'ուզէր որ բժիշկը խելագարներուն ալ միշտ այցելութիւն ընէ ու պէտք եղած դարմանը հրամայէ. բայց ասի ծախուց կարօտ ըլլալուն համար ետ մնաց. ուստի Յիմարանոցը մի եւ նոյն վիճակին մէջ մնաց, ուր որ էր. այսու ամենայնիւ Հիւանդանոցի հաստատութեան այս բաժանումը թէ մաքրութեան եւ թէ ուրիշ կարգադրութեանց մասին աւելի գոհացուցիչ վիճակ մը ունեցած է, քան թէ միւս բաժանումները:

ԿՐԹԱՐԱՆ

Այս յարկն ալ՝ երկուքի բաժնուած, երկուսեւի որք եւ անտէր զաւակաց յատկացեալ է: Մանչ տղայոց կրթարանին մէջ 100 տղայ կրնան պատսպարիլ, իւրաքանչիւրն իրեն համար յատուկ անկողին եւ հանդերձեղէն ու



նենալով . սակայն տղայոց թիւը երբեմն մինչ  
 չեւ 130 հասնելուն , բնականաբար տղայոց  
 հանգստութիւնը վրդովեցաւ . ուստի Հողա-  
 բարձութիւնս հաստատապէս որոշեց մանչ  
 տղայոց թիւը 10<sup>0</sup>ը չանցընել , հետեւաբար  
 տղայոց թիւը 10<sup>0</sup>ի իջեցուց : Կրթարանը իրեն  
 յատուկ եղած պէտքերը լրացունելու անկա-  
 ըող եղած է , ըստ որում Հողաբարձութիւնս  
 հիւանդանոցի նիւթական անհրաժեշտ պի-  
 տոյքը հոգալու զբաղած՝ անտանելի դժուա-  
 րութիւններով գէթ օրական հացը ճարելու  
 ետեւէ եղած էր . այսպիսի կացութեամբ կրթ-  
 արանի արդիւնքն ու յառաջադիմութիւնը  
 անգոհացուցիչ ըլլալը հարկաւ զարմանք չէ .  
 այսու ամենայնիւ 16 ամսոց մէջ քիչ շատ Հա-  
 յերէնի , Գաղղիարէնի , Թուաբանութեան ,  
 Պատմութեան եւ Սշխարհագրութեան դա-  
 սախօսութեանց շարունակութիւն եղաւ , որոց  
 հարցաքննութիւնը Համբարձման տօնի շաբ-  
 թուն կատարուելով , պարզեւաբաշխութեան  
 հանդէսն ալ տօնին օրը կատարուեցաւ , 'ի  
 ներկայութեան Սրբազան Պատրիարք Հօր : Ս-  
 լելորդ չեմք համարեր յիշել , որ կրթարանի  
 յառաջադիմութեանը մեծապէս նպաստած է  
 Հիւանդանոցի նախկին աշակերտներէն Փէլէկ-  
 եան Սիմոն աղային ձրիապէս ու անձնուիրա-  
 բար այցելու դասատուութիւն ընելը , որ ար-  
 դարեւ շնորհակալութեան արժանի է :

Կրթարանի աշակերտաց եւ անզգաստ պա-



աղապարեւոյ համար մէկ քանի արհեստներ ,  
ինչպէս կոշկակարութիւն , դարբնութիւն ,  
եւ այլն , թէեւ խիստ հարկաւոր ճանչցուեցան  
Հողարարձութեանս կողմանէ , բայց այս ալ  
իր դորձադրութիւնը դեռ չը կրցաւ ունենալ  
Հողարարձութիւնս շուարեցընող նիւթական  
դժուարութեանց պատճառաւ :



## Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Հողարարձութիւնս իր կատարած պաշտօնին համառօտ Տեղեկագիրը Պատկառելի Ժողովոյդ հաղորդելէ ետեւ , պարտ կը համարի կարճառօտիւ եւս իր կարծիքը յայտնել Հիւանդանոցի ապագայ կացութեանը նկատմամբ՝ անոր մատակարարուելու միջոցներուն վրայ : Հիւանդանոց 16 ամսոց շրջանի մը մէջ աղէկ գէշ ապրեցաւ . վերջապէս աղէկութիւնն ալ գէշութիւնն ալ անցեալ օրերու մէջ թաղուեցան . պէտք է նայինք որ ներկայ ու ապագայ օրերու մէջ Հիւանդանոցն աւելի բարելաւ վիճակ մ'ու աւելի գոհացուցիչ կացութիւն մ' ունենայ . մարդիկ կը մոռնան անցեալը , բայց կզգան ներկայն ու ապագայն . պէտք է ազատել այնչափ հարիւրաւոր խեղճ արարածներն՝ որբերն ու հիւանդները՝ անկարներն ու խելագարները ներկայ ու ապագայ թշուառութենէ , որք միայն կը յիշե-



ցընեն անցելոյն դառնութիւնը : Պէտք է ու  
րեմն ապահովել Հիւանդանոցի կացութիւնը ,  
որ կըլլայ միմիայն անոր ելեւմտիցը մէջ հաս  
տատուն կարգադրութիւն մ'ընելով . քանզի  
այսօր Ֆաղաքական ժողովը հրաժարելով  
տուրքի խնդիրը երեսի վրայ կրնայ մնալ ,  
վաղը Տնտեսական խորհուրդը կրնայ երկպա  
ռակիլ . բայց Հիւանդանոցը ոչ երբէք առանց  
հացի կրնայ ապրիլ . օր մը ելեւմտից հոգա  
բարձութիւնը կեդրոնական սնտուկէն Հի  
ւանդանոցի նպտատելու կը դժկամակի , օր  
մ'ալ . . . . . բայց Հիւանդանոցը ոչ երբէք  
առանց հացի կրնայ ապրիլ : Բոլոր ասոնք  
հաստատուած են փորձերով . վերջապէս Հի  
ւանդանոցի կացութիւնը պէտք է ապահովել ,  
եւ ասոր համար ալ պէտք է Հիւանդանոցի  
ծախուցը դէմ հասոյթներ սրոշել , որք փո  
խանակ՝ կեդրոնական սնտուկին մէջ թափ  
ուելէ ետեւ Հիւանդանոցի մատակարարու  
թեան յանձնուելու , ուղղակի Հիւանդանոցի  
մատակարարութեան յանձնուի : Ս.յս կերպ  
կարգադրութեամբ մը Հիւանդանոցի մատա  
կարարութիւնը դիւրին եւ կացութիւնը ապա  
հով ըլլալուն վրայ Հոգաբարձութիւնս աներկ  
բայ ըլլալով, Հիւանդանոցի համար պէտք եղած  
տարեկան ծախուց դումարը ապագային հա  
մար կորոշէ , եւ անոր սեպհական հասութից  
քանակութիւններն ալ որոշելով , ո՛րչափ դու  
մարի եւս պէտք մնալը կը սահմանէ :



Հիւանդանոցի ելեւմտից հաշուեցոյցը կը  
 ցուցնէ թէ ամբողջ մէկ տարուան մէջ 427832  
 զրշ 35 փրյ ծախք եղած է . եթէ Հիւանդա-  
 նոցի մատակարարութիւնը դիւրութիւն ու-  
 նենայ ամենայն ինչ կանխիկ ստակով ու-  
 նուազուրդով գնել , տարակոյս չը կայ որ այս-  
 չափ ծախուց վրայ գէթ 27832 զրշ 35 փրյ  
 կրնայ վաստկիլ . եւ որովհետեւ Հիւանդանոցը  
 ուրիշ անհրաժեշտ բարւոքութեան հետեւա-  
 բար նոր ծախուց պէտք ունի , ասոր համար  
 30000 զրշի յաւելուած մը կրնայ բաւել . ըսել  
 է թէ Հիւանդանոցի ամբողջ ծախուց գու-  
 մարը 430000 զրշի կրնայ սահմանուիլ :

Գանք այժմ Հիւանդանոցի սեպհական ե-  
 կամուաներուն .

80000 զրշի չափ կալուածներէ ու պատըս-  
 պարեալներէ հասոյթ .

33075 զրշ Տէրութեան շնորհած հաց եւ միս .

21900 " Տատեան դերդաստանին մսին գինը

13025 " Գանձանակէ , դրան տուրքէ , ու  
 ննջեցեալներէ եւայլն :

---

150000 զրշ Գումար եկամտից :

Ըսել է թէ հիւանդանոցի հաստատ եկամը-  
 տից ամբողջ գումարը 130000 զրշի կրնայ սահ-  
 մանուիլ . ուրեմն հիւանդանոցի կացութիւնն  
 ապահովելու համար՝ տարին 300000 զրշի հա-  
 սոյթ պէտք է սահմանել . առանց ասոր Հի-  
 ւանդանոցի կացութիւնը միշտ անհաստատ ու  
 վատթար պիտի ըլլայ , հետեւաբար , ինչպէս



մեք, նոյնպէս եւ ամեն դպիք Հոգաբարձութիւն պիտի կարող չլլան Հիւանդանոցի մը պէտք եղած սնունդ, մաքրութիւն բարեկարգութիւնն եւ այլն հայթայթել:

Այսպէս կը վերջացընեմք, Սրբազան Տէ՛ր եւ Մեծապատիւ Տեա՛րք, մեր կրկին շրջանին համառօտ տեղեկագիրը, խնդրելով որ ներողամիտ դանուիք, այն ամեն թերութեանց որք ահամայ տեղի ունեցած են, եւ որք կրնային անհետ ըլլալ եթէ Հոգաբարձութիւնս դրամական դժուարութիւններով այս աստիճան պաշարուած չլլար:

Խորհ. Հիւանդ. Հոգաբարձութեան

Կ.-Պօլիս 8 Մայիս 1865:

### Ա Ն Դ Ա Մ Ք

#### ՀԻՒՆԴԱՆՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

ՄԻՐԻՃԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Ապենապէտ \*

Գ. ՄՈԶԵԱՆ

Ապենապէտ \*

ԳՐԻԳՈՐ ՍԻՆԱՆԵԱՆ

ՅԱԿՈԲ ՍԻՐՈՒՆԵԱՆ


ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՀՏԵՍԻ ԳԱՐԻԻԷԼԵԱՆ

ԹԱԳԻՈՐ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ

Մ. ՄԻՀՐԱՆ ՊԱԽԶԷԳԱՓՈՒԼՈՒԵԱՆ

Պ. Ն.

Գանձապէտ \*





2013





ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՔԻԻՐՔՆԻՆ